

BACCALAURÉAT GÉNÉRAL

SÉRIE LITTÉRAIRE : LANGUE VIVANTE 1 Coefficient: 4
SÉRIE ÉCONOMIQUE ET SOCIALE - SÉRIE SCIENTIFIQUE : LANGUE VIVANTE 1 Coefficient: 3

ÉPREUVE D'ARMÉNIEN ORIENTAL

L'usage des calculatrices et des dictionnaires est interdit

Durée de l'épreuve: 3 heures

Les candidats indiqueront en haut de leur copie s'ils composent en arménien oriental ou occidental.
Le texte est présenté sous les deux variantes.

Texte en arménien oriental

ԳԻՐՔԸ

Ըստ Անահիտ Սահինյանի

Ես որոշել էի նարտարագետ¹ դառնալ: Գրելը թողած, ես համալսարանի առաջին տարին ամբողջովին տարվել² էի իմ դասերով: Սովորում էի մեծ հաճությամբ: Բայց եթե ձեռքս մի գեղարվեստական³ գիրք, վեպ էր ընկնում, ամեն բան մոռացած, վրա էի ընկնում⁴, մի շնչում կարդում:

5 Մի օր դասամիջոցին դասընկերուհիներիցս մեկի ձեռքին մի հաստ գիրք տեսա ... վեպ ... Առաջին էջի վրա գրված էր «Հարություն»⁵, ծանոթ անուն էր:

— Շատ եմ խնդրում, տուր, տանեմ, կարդամ, — ասացի ես:

Զմերժեց:

10 Մի հին դասագրքում կարդացել էի Ղազարոս Աղայանի⁶ «Հարություն և Մանվել» վեպի հատվածները⁷: Կարծեցի, այդ վեպի շարունակությունն է ձեռքս ընկած այս «Հարությունը»:

Տարա տուն, սկսեցի կարդալ... Հափշտակվեցի⁸ գրքում կատարվող դեպքերով, մոռացա Հարությունին ու Մանվելին:

15 Գիրքն ավարտելուց հետո նորից նայեցի վերնագրին ու հասկացա, որ ոտքս դուրս եմ դրել հայ գրականությունից:

Գիրքը վերադարձրի ընկերուհուս և խնդրեցի մեկ ուրիշը, եթե ունի:

— Ես սա գրադարանից եմ վերցրել, — ասաց նա:

Ընկերուհիս բացատրեց ինձ այդ գրադարանի տեղը:

20 Հետևյալ օրը գնացի և գտա այդ գրադարանը: Գրքեր հանձնողը ծանոթ երիտասարդ էր: Նա խոստացավ «լավ» գրքեր տալ ինձ կարդալու, պայմանով, որ ընթերցասրահում⁹ կարդամ: Հազվագյուտ¹⁰ գրքեր, ասաց, թույլ չեն տրվում տուն տանել:

Դրանից հետո ես դարձա գրադարանի ամենօրյա այցելուն: Դասերից հետո, ազատ ժամերին վազում էի գրադարան: Սկսեցի կարդալ թարգմանություններ՝ Շեքսպիր, Վիկտոր Հյուգո, Մոպսսան, Շիլլեր, Դիկենս ... համաշխարհային գրականության 25 այլևայլ գոհարներ:

Ամեն գրքից հետո ես ինքս, իմ կարծիքով, անճանաչելիորեն փոխվում էի, հանելի ու զարմանալի էր, որ ոչ ոք այդ չէր նկատում: Իմ երևակայությամբ, ես դարձա հեքիաթի մոխրոտի¹¹ պես մի բան, որին շրջապատի¹² մարդիկ միամտաբար համարում¹³ էին մի աննշան¹⁴, հասարակ աղջիկ, մինչդեռ նա շուտով կանգնելու էր իրենց առջև իշխանուհու¹⁵ պես շքեղ ... ու գեղեցիկ:

- ¹ նարտարագետ : ingénieur
² տարվել : être pris
³ գեղարվեստական գիրք : œuvre littéraire
⁴ վրա ընկնել : se précipiter
⁵ « Հարություն » : « La Résurrection » (il s'agit de l'œuvre de Léon Tolstoy)
⁶ Ղազարոս Աղայան : Ghazaros Aghayan (écrivain, 1840-1911)
⁷ հատված : extrait
⁸ հափշտակվել : être emporté, être séduit

- ⁹ ընթերցարան : salle de lecture
¹⁰ հազվագյուտ : rare
¹¹ մոխրոտ : Cendrillon (Personnage de contes de fées de C. Perrault. Cette jeune fille, persécutée par sa marâtre, triomphe de l'adversité grâce à sa beauté et épouse le fils du roi)
¹² շրջապատ : entourage
¹³ համարել : considérer
¹⁴ աննշան : insignifiant, sans importance
¹⁵ իշխանուհի : princesse

I - Compréhension écrite

1- Traduisez en français de la ligne 12 jusqu'à « տուն տանել » ligne 21.

2- Répondez aux questions suivantes par Oui / Non :

- Պատմողը չէր կարդացել՝ «Հարություն և Մանվել» վեպը:
- Դասերից բացակայելով գնում էր գրադարան:
- Ամեն մի գրքից հետո, զարմանալիորեն փոխվում էր նա:
- Գրադարանում գրքեր հանձնողը իրեն ծանոթ մի երիտասարդ էր:
- Նրան հետաքրքրում էին միայն Շեքսպիրն ու Վիկտոր Հյուգոն:

3- Répondez brièvement aux questions suivantes :

- Գրվածքի առաջին չորս տողերի մեջ, ի՞նչի մասին է խոսում պատմողը, ի՞նչ է ուզում դրսևորել (mettre en évidence) հատկապես:
- «Հարություն» վեպը կարդալուց հետո, ի՞նչ բան արթնացավ նրա մեջ, ի՞նչ ուզեց անել հետո:
- Գրադարանի «հազվագյուտ գրքեր թույլ չեն տրվում տուն տանել» : Ինչո՞ւ : Ի՞նչ պատճառներ կան արգելելու:
- Պատմողը իրեն նմանեցնում է հեքիաթի մոխրոտին: Ի՞նչ բանի մեջ է գտնում այդ նմանությունը:

II - Expression personnelle

Ինչո՞վ եք զբաղվում ձեր ազատ ժամերին: Գրքի կամ թերթի ընթերցումը ձեզ հետաքրքրում է: Իսկ հայերեն գիրք, թերթ ի՞նչպես, առիթն ունենում եք կարդալու: Գրեցեք այդ մասին: